տանում ամենաշատը վկայակոչվում է «ալ-Լուրիյա» ցեղը, որին միջնադարի գրեթե բոլոր արաբ հեղինակները քուրդ են համարել։ Սակայն հարկ է նշել, որ առ այսօր պարզ չէ ժամանակակից լուրերի (լորերի) ծագումը։ Հետազոտողների մի մասի կարծիքով լուրերը արևմտյան Իրանի տեղաբնիկներ են և պատկանում են Զագրոս լեռան միևնույն էթնոլեզվախմբին[40]։

Լուրիստանի մասին խոսելիս արաբ աշխարհագիրները նշում են, որ այն Խուզիստանի շրջաններից էր, բայց ընդգրկվեց Ջիբալի կազմի մեջ[41]։ Իբն Հաուկալն ու ալ-Իդրիսին (XII դ.) գրում են, որ Բիլադ ալ-Լուրը (Լուրիստանը) հարուստ երկիր է, որին տիրում են քրդերը[42]։ Յակութը նշում է, որ լուրը քրդական մի ցեղ է, որը բնակվում է Իսֆահանի ու Խուզիստանի միջև ընկած լեռներում։ Այդ շրջանները կրում են նրա անունը և կոչվում են Բիլադ ալ-Լուր[43]։ Լուրիստանում քրդերին հիշատակել է նաև արաբ աշխարհագիր-մատենագիր Աբու ալ-Ֆիդան[44] (XIII—XIV դդ.)։

Խուզիստանում ու Լուրիստանում քրդերի հիշատակումը զարմանալի չէ, քանի որ դրանք քրդական շրջաններին սահմանակից նահանգներ էին։ Իբն Հաուկալը և ալ-Իսթախրին (X դ.) Խուզիստանում բնակվող ժողովուրդների լեզվի մասին խոսելիս նշում են, որ այստեղ խոսում են արաբերեն, պարսկերեն և մեկ այլ լեզվով, որը կոչվում է խուզի։ Ըստ արաբ աշխարհագիրների, վերջինս ինքնուրույն լեզու է. այն ո՛չ եբրայերեն է, ոչ ասորերեն և ոչ էլ պարսկերեն[45]։ Ուշագրավ է, որ արաբ աշխարհագիրներն ու մատենագիրներն այդ լեզուն քրդական չեն համարել կամ էլ նույնացրել քրդերենի հետ։ Նրանց տվյալներից երևում է, որ այդ լեզուն տարածված է եղել Խուզիստանում և ըստ ալ-Մուկադդասիի (X դ.) համարվել է «սատանաների լեզու»[46]։

Այսպիսով, կասկածի տակ չառնելով Խուզիստանում, ինչպես նաև Լուրիստանում քրդերի առկայությունը, ենթադրում ենք, որ երբեմն «քուրդ» տերմինը արաբ հեղինակների երկերում օգտագործվել է ոչ էթնիկական նշանակությամբ։ Դա հաստատվում է նաև Ֆարսում, Քերմանում և այլուր այդ տերմինի կիրառությամբ։ Վերոհիշյալ նահանգների տեղաբնիկ քոչվոր-անասնապահ ցեղերին քուրդ համարելով կամ քրդերին նմանեցնելով, ամենայն հավանականությամբ, սկզբնաղբյուրները նկատի են ունեցել տվյալ ժողովուրդների կենցաղավարությունը[47]։

Միջնադարի արաբական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ VII—X դդ. արաբական երկարատև գերիշխանության բացասական ամենամեծ հետևանքը եղավ այն, որ երբեմն շահադիտական նկատառումներով, երբեմն էլ խուսափելով ֆեոդալական ծանր կապանքներից, քրդերը սկսեցին հեռանալ հայրենի լեռնաշխարհից և հաստատվել հարևան ժողովուրդներին պատկանող տարածքներում։ Այլ կերպ ասած, սկիզբ առավ քրդերի արտահոսք,

---

[40] „Народы передней Азии", М., 1957, с. 264; G. N. Curzon, Persia and the Persian question, v. II, London, 1892, pp. 306—314; V. Minorsky, „Lur" (The Encyclopaedia of Islam, v. III, London, 1963, pp. 41—46); В. В. Бартольт, Соч., т. VII, М., 1971, с. 178—188.

[41] Ibn Haukal, *Նշվ. աշխ., էջ 170—171*; Al-Istakhri, *Նշվ. աշխ., էջ 88*։

[42] Ibn Haukal, *Նշվ. աշխ., էջ 176*, Al-Idrisi, Opvs Geographicvm, f. IV, Roma-Neapol, 1974, p. 400.

[43] ياقوت ، معجم ، ج. ٥ ، ص ١٦ ، ٢٥ .

[44] D'Aboul-Fedae, Geographie, Paris, 1840, p. 312—313.

[45] Ibn Haukal, *Նշվ. աշխ., 173—174*; Al-Istakhri, *Նշվ. աշխ., էջ 91*։

[46] Al-Moqddasi, Descriptio Imperi moslimici, (BGA), ed. M. S. De Goeje, Lugduni Batavorum Apud E. J. Brill, 1906, p. 418.

[47] *Այդ մասին տե՛ս* Ibn Haukal, *Նշվ. աշխ., էջ 185—187, 220—221*; Al-Istakhri, *Նշվ. աշխ., էջ 113—114, 163—164*։